ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ . № 3, 1957 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

Սույն թվականի հունվարի 18-ին կայացավ ԳԱ Փիլիսոփայության սեկտորի գիտական սեսիան՝ «Պատմական մատերիալիզմի մի քանի հարցերը ՍՄԿՊ 20-րդ համագումարի լույսի տակ» թեմայով։ Բացման խոսքով հանդես եկավ փիլ. գիտ. թեկնածու Յա. Ի. Խաչիկյանը։ Նշելով ՍՄԿՊ 20-րդ համագումարի խոշոր նշանակությունը իդեոլոգիական աշխատանքների բարելավման, մարքսիստական փիլիսոփայության հետագա զարգացման գործում, Յա. Խաչիկյանը կանգ առավ սեկտորի կազմակերպած գիտական սեսիայի նպատակների ու խնդիրների վրա։ «Սեսիայի նպատակն է,— ասաց նա,— փիլիսոփաների և հասարակական գիտությունների մյուս բնագավառներում աշխատողների, դասախոսների ուշադրությունը հրավիրել պատմական մատերիալիզմի մի քանի կարևոր հարցերի վրա, որոնք բխում են Կոմունիստական պարտիայի 20-րդ համագումարի որոշումներից, և դրանով իսկ նպաստել այդ հարցերի գիտական բազմակողմանի մշակմանն ու ըմբռնմանը»։

Սեսիայում «Պատմական մատերիալիզմի մի քանի հարցերը ՍՄԿՊ 20-րդ համագումարի լույսի տակ» ներածական զեկուցումով հանդես եկավ Սեկտորի վարիչ Հ. Ասլանյանը։

Անդրադառնալով 20-րդ համագումարում բարձրացված պատմական մատերիալիզմի հարցերին, Հ. Ասլանյանը ընդգծեց այնպիսի պրոբլեմների հետագա մշակման անհրաժեշտությունը, ինչպիսիք են՝ սոցիալիստական հասարակության առաջացման և հաստատման օրինաչափությունները, սոցիալիզմին անցնելու ձևերը տարբեր երկրներում, արդի պայմաններում ազատագրական շարժումների մեջ ժողովրդական լայն մասսաների դերը, տեխնիկական պրոգրեսը և նրա սոցիալական հետևանքները, պատերազմի և խաղաղության հարցը։

Իր զեկուցման մեջ Հ. Ասլանյանը հատկապես սրեց ժամանակակից բուրժուական գաղափարախոսության սիստեմատիկ քննադատության անհրաժեշտության խնդիրը։ 20-րդ համագումարը, ասաց նա, կրկին անգամ ընդգծեց երկու սիստեմների՝ սոցիալիզմի և կապիտալիզմի խաղաղ գոյակցության հնարավորությունը, սակայն, այս ճիշտ գրությունը չի կարելի մեխանիկորեն փոխադրել գաղափարախոսության բնագավառը և թուլացնել բուրժուական հետադիմական ուսմունքների հետագա քննադատությունը։ Երկու սիստեմների խաղաղ գոյակցության հնարավորության լենինյան գրությունը չի բառացում, այլ, ընդհակառակը, էլ ավելի է սրում երկու անհաշտ, միմյանց հակադիր գաղափարախոսությունների՝ բանվոր դասակարգի առաջավոր գաղափարախոսության և իմպերիալիզմի հետադեմ, շահագործումն ու գաղութային լուծն արդարացնող, գաղափարախոսության պայքարի հարցը։

Հ. Ասլանյանը ընդգծեց կապիտալիստական աշխարհում տարածված, այսպես կոչված, կապիտալիզմի նոր ստադիայի վերաբերյալ թեորիաների քննադատության անհրաժեշտությունը։

Փիլ. գիտ. թեկնածու Վ. Սեյանը «Ճանապարհ երկրների սոցիալիզմին անցնելու ձևերի մասին» զեկուցման մեջ, կոնկրետ փաստերի վերլուծման հիման վրա, ցույց տվեց չինական ռևոլյուցիայի յուրահատկությունները։ Նա հանգամանորեն կանգ առավ Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայում սոցիալիզմի կառուցման բնորոշ կողմերի վրա։

Սեսիայում լսվեց նաև փիլ. գիտ. թեկնածու Մ. Դանիելյանի հետաքրքրական զեկուցումը կոմունիստական բարոյականության մասին։ Նա հանգամանորեն վերլուծեց Վ. Ի. Լենինի ասույթները բարոյականության մասին և առաջ քաշեց մի շարք հարցեր։

Գեոպոլիտիկայի քննադատությանն էր նվիրված փիլ. գիտ. թեկնածու Ա. Ոսկանյանի զեկուցումը՝ «Գեոպոլիտիկական տեսություններ» իդեալիստական և հետադիմական էությունը»։

Բնութագրելով գերմանական ֆաշիզմի գեոպոլիտիկական տեսությունները, զեկուցողը նշեց, որ ԱՄՆ-ի իմպերիալիստական շրջանների գաղափարական արտահայտիչները գերմանա-ֆաշիստական հետադիմական ուսմունքների փլատակներից դուրս հանեցին և որդեգրեցին գեոպոլիտիկական տեսություն՝ հարմարեցնելով այն ամերիկյան մոնոպոլիստական

կապիտալի շահերին։ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության փաստերի հիման վրա Ա. Ոսկանյանը ցույց տվեց, թե ինչպես ԱՄՆ-ի ռեակցիոն շրջանները իրենց իմպերիալիստական նպատակները «հիմնավորում» են գեոպոլիտիկական տեսությունների միջոցով։ Զեկուցողը բացահայտեց նաև «էյզենհաուերի դոկտրինայի» էությունը, ընդգծելով, որ Միացյալ Նահանգների առաջադրած ծրագիրը, Մերձավոր և Միջին Արևելքի վերաբերյալ, իրենից ներկայացնում է իմպերիալիստական էքսպանսիայի արտահայտություն, հանդիսանում է գեոպոլիտիկական տեսությունը պրակտիկայում իրականացնելու ԱՄՆ-ի կառավարող շրջանների հերթական փորձը։

Իր զեկուցման մեջ փիլ. գիտ. թեկնածու Ս. Թովմասյանը փորձ արեց բնութագրելու Արևելքի ժամանակակից մի քանի հետամնաց և գաղութային երկրների զարգացման կապիտալիստական ուղին շրջանցելու առանձնահատկությունների հարցը։ Զեկուցողը այդ երկրները բաժանեց երեք խմբի. առաջին խմբի մեջ մտնում են այն երկրներն ու ժողովուրդները, որոնք սոցիալիզմին անցան ՍՍՌՄ-ի սիստեմում. դրանք են մեր Հայրենիքի միջին-ասիական ռեսպուբլիկաների ժողովուրդները, որոնք սոցիալիստական հասարակարգ կառուցեցին՝ շրջանցելով կապիտալիստական տնտեսաձևը։ Երկրորդ խմբի մեջ զեկուցողը դասեց Չինաստանի, Մոնղոլիայի, Վիետնամի, Հյուսիսային Կորեայի ժողովուրդներին, որոնք, թոթափելով գաղութային լուծը, հաստատուն կերպով բռնեցին սոցիալիստական զարգացման ուղին։ Երրորդ խմբի մեջ մտնում են այն երկրներն ու ժողովուրդները, որոնք, ազատագրվելով զարգացած կապիտալիստական տերությունների գաղութային շահագործումից, իրենց երկրներում կատարեցին տնտեսական և քաղաքական մի շարք վերափոխումներ։ Այդպիսի երկրների թվին են պատկանում Հնդկաստանը, Ինդոնեզիան, Եգիպտոսը, Սիրիան, Ցեյլոնը և այլն։

Ընդհանուր գծերով բնորոշելով առաջին և երկրորդ խմբի մեջ մտնող երկրների և ժողովուրդների սոցիալիզմին անցնելու ուղիները, նրանց հիմնական առանձնահատկությունները Ս. Թովմասյանը ավելի հանգամանորեն կանգ առավ երրորդ խմբին պատկանող երկրներում կատարված սոցիալ-տնտեսական տեղաշարժերի վրա։ Նոր, թարմ տվյալների հիման վրա զեկուցողը փորձ արեց անել մի քանի տեսական ընդհանրացումներ։

Զեկուցումներից հետո ելույթ ունեցան ընկ. ընկ. Ա. Հարությունյանը, Ս. Բաղալյանը, Ա. Ցրաղաղպանյանը, Վ. Ղաղանչյանը, Դ. Հարությունյանը։ Նրանք նշեցին Սեկտորի կազմակերպած սեսիայի նշանակությունը և միաժամանակ վեր հանեցին կարդացված զեկուցումների արժանիքներն ու մի շարք թերությունները։

Եզրափակման խոսքում Սեկտորի վարիչ Հ. Ասլանյանն հայտնեց, որ ընթացիկ տարում նախատեսվում է կազմակերպել եռ երկու սեսիա՝ «Դիալեկտիկական մատերիալիզմի հարցերը ժամանակակից պահանջների լույսի տակ» և «Ժամանակակից բնագիտության փիլիսոփայական հարցերը» թեմաներով։ Այդ սեսիաները կազմակերպվելիս հաշվի կառնվեն, ասաց նա, ինչպես ընկերների դիտողություններն ու ցանկությունները, այնպես էլ այս սեսիայի փորձը՝ հետագա սեսիաները գիտական ավելի բարձր մակարդակով անցկացնելու համար։

ՔՆՆԱՐԿՈՒՄ ՍՍՌՄ ԳԵՂԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

1956 թ. նոյեմբերի 20-ին Մոսկվայում տեղի ունեցավ ՍՍՌՄ Գեղարվեստների ակադեմիայի Կերպարվեստի թեորիայի և պատմության գիտահետազոտական ինստիտուտի Ժողովրդական արվեստի և գեղարվեստական արդյունաբերության սեկտորի նիստը, որին համատեղությամբ մասնակցում էին ՍՍՌՄ Շինարարության և հարտարապետության Ակադեմիայի և Պետական պատմական թանգարանի ներկայացուցիչները՝ Ա. Ի. Լեոնովը, Ն. Մ. Տեմերինը, Ա. Ք. Սուլտիկովը, Ի. Մ. Բիրիկովան, Ա. Շ. Մնացականյանը, Տ. Գ. Գոլբերտը, Մ. Մ. Պոստնիկովան, Մ. Վ. Շչեպկինան, Ն. Ռ. Լեվենսոնը, Ի. Մ. Սուսլովը, Ս. Ս. Սլերսենը, Տ. Նազարյանը։ Քննարկման էր դրված Ա. Մնացականյանի «Հայկական զարդարվեստ» աշխատությունը։ Մասերի փոխանակության ընթացքում ելույթ ունեցող ընկերները վեր հանեցին գրքի արժանիքները։ Նրանց կարծիքով գիրքն, ընդհանուր առմամբ, իրենից ներկայացնում է օրիգինալ, արժեքավոր և լուրջ աշխատասիրություն, որտեղ շատ բան է արված, ընտրված և կան վիճարկելի խնդիրներ։ Արժեքավոր համարվեց հատկապես այն, որ գրքի մեջ բացահայտվում են զարդարվեստի իմաստային նշանակությունը և ռեալիստական հիմքերը, մի բան, որ մեծ նշանակություն ունի և՝ ազդագրագետների, և՝ արվեստագետների համար։ Իմաստային նշանակության ըմբռնումը օգնում է երկրի էսթետիկական գնահատմանը։ Նպատակահարմար և ցանկալի համարվեց Ա. Մնացականյանի «Հայկական զարդարվեստ» գրքի ռուսերեն թարգմանությունը։